ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սեպտեմբերի 26-ին Երևանի ս. Սարգիս և Թբիլիսիի ս. Գևորգ եկեղեցիներում տեղի ունեցան քահանայական ձեռնադրություններ:

Այս փաստը մեծ ուրախությամբ ենք արձանագրում, որովհետև նորընծա վեց քահանաներից չորսը հոգևոր ճեմարանում սովորած մեր նախկին սաներն են: Տերն իր այգու համար միշտ արժանավոր հովիվներ է պատրաստում: «Հունձք բազում են և մըշակք սակաւք»: Վերջին 5—6 տարիների ընթացքում միայն Արարատյան թեմում կատարվել են 15 քահանայական ձեռնադրություն:

Այս ուրախալի և ոգևորիչ երևույթի առաջ որքան տխուր ու դատապարտելի է թվում Երևանում պաշտոնավարած նախկին մի քանի քահանաների հայրենալքումը, երբ թողնում են իրենց բանավոր «հօտը», մայր հայրենիքը և անառակ որդու նման հեռանում սեփական տնից՝ դառնալով դասալիքներ:

Նորընծա քահանաներից տ. Գրիգոր Ծատուրյանը, տ. Սամվել Համբարձումյանը և տ. Սարգիս Թաշճյանը ձեռնադրվել են Երեվանի ս. Սարգիս եկեղեցում՝ ձեռամբ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Վահան եպս. Տերյանի: Տ. Տիրայր Կոնսուլյանը, տ. Տաթև Հարությունյանը և տ. Շմավոն Սաղոյանը ձեռնադրվել են Թբիլիսիի հայոց ս. Գևորգ եկեղեցում՝ ձեռամբ վրահայոց թեմի առաջնորդ տ. Կոմիտաս եպս. Տեր-Ստեփանյանի:

Ձեռնադրության կարգը, ըստ Մաշտոցի, կատարվում է երկու օրվա ընթացքում. շաբաթ օրը կատարվում է նորընծաների «կոչումն քահանայութեան յերեկոյէ» կարգը, երբ քահանայացուները հրապարակավ տալիս են իրենց հավատի խոստովանությունը և նախապատրաստվում ընդունելու «զլուծն Քրիստոսի և երթալ կամաւ զհետ կենարարին, ուխտել յանձին զհետ երթալ ընթացիցն Քրիստոսի, յաղքատութիւն, ի քաղց, ի ծարաւ, ի վիշտս, ի հալածանս, ի նախատինս, ի չարչարանս վասն Քրիստոսի»:

Այնուհետև տ. Կոմիտաս և տ. Վահան ձեռնադրիչ եպիսկոպոսները քննում են նորընծաների մտավոր և հոգևոր պատրաստությունը, թե «ունի՞ զուսումն քահանայութեան լիով, և զգիտութիւն աստուածային օրինաց»:

Կիրակի օրը, ս. պատարագից առաջ, կատարվում է նորընծաների «Կանոն ձեռնադրութեան քահանայի», աղոթքներով, ս. գրական ընթերցումներով, շարականով և սաղմոսերգությամբ:

Եկեղեցին միաբերան աղոթում է, «Աստուածային և երկնային շնորհ որ միշտ լնու զպէտս սրբոյ սպասաւորութեան առաքելական եկեղեցւոյ», որից հետո կատարվում

է ձեռնադրության կարգը, «զի արժանի լիցի» նորընծան «աստիճան քահանայութեան, անարատ պահել առաջի սեղանոյ Տեառն Աստուծոյ»:

Այնուհետև կատարվում է օծման կարգը, որով նորընծան իշխանություն է ստանում «կնքել և կատարել ս. պատարագս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի վասն կենդանեաց և ննջեցելոց»:

Ձեռնադրության սույն խորհրդավոր և սրտագրավ արարողությանը ներկա են լինում բազում հավատացյալներ:

Ձեռնադրիչ եպիսկոպոսները գեղեցիկ խրատականով թելադրում են նորընծաներին օրինակ լինել հավատացյալներին «բանիւք, գնացիւք, սիրով, հաւատովք, սրբութեամբ» (Ա. Տիմթ. Դ 12):

Նորընծաները, իրենց կանոնական քառասունքը անցկացնելուց հետո, կնվիրվեն իրենց հոգևոր ծառայության գործին:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է Արարատյան և վրահայոց թեմերի առաջնորդ սրբազաններին, թեմական-եկեղեցական խորհուրդներին՝ այս ոգեվորիչ ու խոստումնալից հոգևոր հնձի առիթով և սրտեռանդն բարեմաղթում, որ նորընծաները լինեն «մշակք առանց ամօթոյ»:

***

Տ. Սարգիս քհն. Թաշճյան. ծնվել է 1942 թվականին: Ներգաղթել է 1956 թվականին Մոնտեվիդեոյից: Ավարտել է Երևանի օտար լեզուների ինստիտուտը և ապա 1967 թվականին ընդունվել հոգևոր ճեմարան: Միաժամանակ մինչև 1971 թվականը ծառայել է Մայր Աթոռի դիվանատանը որպես քարտուղար և որպես դաստիարակ հոգևոր ճեմարանում:

Այժմ քահանայագործում է Երևանի ս. Սարգիս եկեղեցում:

Տ. Գրիգոր քհն. Ծատուրյան. ծնվել է 1926

Թբիլիսի. քահանայական ձեռնադրության մի պահ ս. Գևորգ եկեղեցում

թվականին Իրանում: Ներգաղթել է 1969 թվականին:

Տ. Սամվել քհն. Համբարձումյան. ծնվել է 1908 թվականին Իրանում: Ներգաղթել է 1946 թվականին:

Տ. Տիրայր քհն. Կոնսուլյան. ծնվել է 1935 թվականին Կահիրեում: Ներգաղթել է 1947 թվականին: 1954 թվականին ավարտել է միջնակարգ դպրոցը Երևանում: 1958 թվականին ընդունվել է Էջմիածնի հոգևոր ճեմարան, որն ավարտել է 1962 թվականին և ձեռնադրվել սարկավագ: 1962—1963 թվականներին սովորել է Զագորսկի հոգևոր ճեմարանում: 1963—1971 թվականներին ծառայել է Մոսկվայի, ապա Թբիլիսիի հայոց եկեղեցիներում, իբրև սարկավագ:

Տ. Տիրայր քհն. Կոնսուլյանը պաշտոնավարում է Թբիլիսիի ս. Գևորգ եկեղեցում:

Տ. Տաթև քհն. Հարությունյան. ծնվել է 1931 թվականին Ալեքսանդրիայում: Ներգաղթել է 1947 թվականին: Սովորել է Երևանի երաժշտական ուսումնարանում: 1970 թվականին ընդունվել է ս. Էջմիածնի վանք՝ ծառայելու որպես դպիր և հետևելու հոգևոր ճեմարանում կրոնագիտական, ծիսական մի շարք դասընթացներին: 1971 թվականին ձեռնադրվել է սարկավագ:

Տ. Տաթև քհն. Հարությունյանը պաշտոնավարում է Թբիլիսիի հայոց ս. Գևորգ եկեղեցում:

Տ. Շմավոն քհն. Սաղոյան. ծնվել է 1949 թվականին Ախալցխայի շրջանի Ծուրղութ գյուղում: Ավարտել է տեղի միջնակարգ հայկական դպրոցը: 1966 թվականին ընդունվել է Էջմիածնի հոգևոր ճեմարան և, ավարտելով ճեմարանի դասարանական բաժինը, որպես դպիր ծառայել է Ախալցխայի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում: 1970 թվականին ուղարկվում է Մայր Աթոռ՝ հմտանալու համար ծիսագիտության ու կրոնագիտության մեջ: 1971 թվականին ձեռնադրվել է սարկավագ:

Տ. Շմավոն քհն. Սաղոյանը պաշտոնավարում է վրահայոց թեմում: